ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 16, 01 դեկտեմբերի 2023թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 10,008,550 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

Սույն թվականի նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովը:

Բանկի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է առ 2023թ. հոկտեմբերի 16-ը, ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:

Հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

Օրակարգ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատում՝ Բանկի բաժնետոմսերի 21-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով Բանկի կանոնադրական կապիտալը 28,132,239,680 ՀՀ դրամ կազմելու վերաբերյալ:
3. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի վերաբերյալ:
4. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգի վերաբերյալ:

Ժողովը հաստատեց Բանկի նոր խմբագրությամբ Կանոնադրությունը. Բանկի բաժնետոմսերի 21-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 28,132,239,680 ՀՀ դրամ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻՀ ԱՐՏԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ